Փայլուն վզնոցը

Կարոլինան պարզապես ուզում էր մի փոքր ավելի երկար իր մոտ պահել վզնոցը:

Կարոլինա Մարին
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Արգենտինայում:

Կարոլինան ուրախ վազում էր բակում: Նրա ընկերուհի Իզաբելան նույնպես դրսում էր:

Իզաբելան ձեռքով արեց: «Եկ խաղանք»:

Կարոլինան վազելով մոտեցավ Իզաբելայի տանը:

Իզաբելան ձեռքը տարավ գրպանը: «Ուզում եմ քեզ մի բան ցույց տալ»,- ասաց նա: Ապա նա հանեց ամենագեղեցիկ վզնոցը, որ Կարոլինան երբևէ տեսել էր: Մանրիկ քարերն այնքան փայլուն ու պայծառ էին:

«Մայրիկինս է», - ասաց Իզաբելան: «Նա ասաց, որ կարող եմ այսօր խաղալ սրանով: Նայիր դրան արևի տակ»:

Իզաբելան ուղղել էր վզնոցը դեպի արևը: Հարյուրավոր ծիածաններ էին արտացոլվում քարերում: Դա այնքան գեղեցիկ էր:

«Եկ հիմա պահմտոցի խաղանք»,- Ասաց Իզաբելան:

«Լավ»,- ասաց Կարոլինան: «Ես կարող եմ օգնել ապահով պահել վզնոցը»:

«Շնորհակալություն»: Իզաբելան Կարոլինային տվեց վզնոցը, իսկ Կարոլինան դրեց գրպանը:

Շուտով Կարոլինայի տուն գնալու ժամանակը եկավ: Երբ նա հրաժեշտ տվեց, Իզաբելան չհարցրեց վզնոցի մասին: Նա հավանաբար մոռացել էր: Իսկ Կարոլինան նրան չհիշեցրեց:

Կարոլինան մի փոքր վատ էր զգում վզնոցը տուն տանելու համար: Բայց նա ուզում էր մի փոքր ավելի երկար պահել այն: Նա անտեսեց վատ զգացողությունը և վզնոցը դրեց բարձի տակ:

Հաջորդ օրը շաբաթ էր: Կարոլինան կատարեց իր տնային գործերը և դուրս գնաց խաղալու: Նա ընդհանրապես մոռացել էր վզնոցի մասին:

«Կարոլինա»,- կանչեց հայրիկը: «Կարո՞ղ ես մոտենալ»:

Կարոլինան ներս վազեց: «Այո՞»:

Հայրիկը վզնոցը բռնել էր ձեռքում: «Մայրիկը գտել է սա քո բարձի տակ: Ո՞ւմ է այն պատկանում»:

«Այն Իզաբելայինն է»: Կարոլինայի աչքերից արցունքներ գլորվեցին: «Ես այն ապահով պահել էի իմ գրպանում, մինչ մենք խաղում էինք երեկ: Բայց հետո ես որոշեցի տուն տանել այն»:

Մայրիկը Կարոլինայի հետ նստեց բազմոցին: «Շնորհակալություն ճիշտը պատմելու համար: Քո կարծիքով ի՞նչ պետք է անես հիմա»:

Կարոլինան լուռ էր: Նա մտածում էր Հիսուսի մասին: Նա կցանկանար, որ Կարոլինան ազնիվ գտնվեր և վերադարձներ վզնոցը:

«Ես պետք է վերադարձնեմ այն Իզաբելային և ներողություն խնդրեմ», - ասաց Կարոլինան: Այն պահին, երբ նա ասաց դա, վատ զգացողությունը վերացավ: Նա ջերմ զգացումներ ունեցավ:

Կարոլինան գնաց Իզաբելայի տուն:

«Բարև»,- ասաց Կարոլինան: Նա Իզաբելային փոխանցեց վզնոցը: «Կներես, որ պահել էի այն ինձ մոտ: Դու ինձ ներո՞ւմ ես»:

«Այո», - ասաց Իզաբելան: «Շնորհակալ եմ այն վերադարձնելու համար»: Ապա նա ժպտաց: «Ուզո՞ւմ ես կրկին պահմտոցի խաղանք»:

«Այո: Առաջինը դու հաշվիր: Ես կթաքնվեմ»:

Այդ գիշեր Կարոլինան աղոթեց: «Սիրելի Երկնային Հայր, խնդրում եմ, ներիր ինձ վզնոցը պահելու համար: Եվ շնորհակալություն, որ օգնեցիր ինձ ուղղել իմ սխալը»:

Կարոլինան կրկին ունեցավ այդ ջերմ զգացումը: Նա ուրախ էր, որ կարող էր անել այն, ինչ Հիսուսը կցանկանար, որ նա աներ: ●

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՊԱՇԽԱՐԵԼ

Մենք բոլորս երբեմն սխալ ընտրություններ ենք կատարում: Բայց Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության շնորհիվ մենք կարող ենք ամեն բան փոխել և ուղղել: Սա կոչվում է ապաշխարություն: Երբ ապաշխարում ենք, մենք ներողություն ենք հայցում նրանցից, ում ցավեցրել ենք: Մենք փորձում ենք ուղղել սխալը: Մենք աղոթում ենք ներման համար: Մենք գործադրում ենք մեր լավագույն ջանքերը, որպեսզի կրկին չկատարենք այդ սխալ ընտրությունը: Այդ ժամանակ մենք կարող ենք ներվել և խաղաղություն զգալ Երկնային Հոր կողմից:

ԱՄՈՒՐԻ ԱՅՈՒԹԵՐՈՎ